Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը 100.000 տոլարի մարդասիրական օգնութիւն կը տրամադրէ Հայաստան Համահայկական Հիմնադրամին

Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը 100.000 տոլար կը յատկացնէ Հայաստան Համահայկական Հիմնադրամին, որպէս մարդասիրական օժանդակութիւն Արցախի ժողովուրդին։ Այս օժանդակութիւնը կը միտի մարդասիրական եւ բժշկական օգնութիւն հասցնելու, եւ վերջին օրերու պատերազմին պատճառով տուժած քաղաքացիներուն նեցուկ կանգնելու։

Հիմնարկութեան տնօրէնուհին՝ Իզապէլ Մօթա նշեց, որ այս օժանդակութիւնը «շարունակութիւնն է Պրն. Գալուստ Կիւլպէնկեանի աւանդութեան, եւ կը հաստատէ հայ ժողովուրդին օգնութեան հասնելու տարիներու առաքելութիւնը, երբ ան դժուար կացութեան մէջ կը գտնուի»։ Տիկին Մօթա աւելցուց՝ «2020 թուականը լի էր մարտահրաւէրներով, յատկապէս Հայաստանի ու Միջին Արեւելքի հայ համայնքներուն համար։ Ինչպէս որ մեր հիմնադիրը 1920-ականներուն օգնած է հայ գաղթականներուն, այսօր մենք կ՚օգնենք պատերազմէն տուժողներուն»։

Այս տարի, Հիմնարկութիւնը զանազան առիթներով մարդասիրական օգնութիւն տրամադրեց թէ՛ Հայաստանի, եւ թէ՛ Սփիւռքի։